BURBANK UNIFIED SCHOOL DISTRICT

Նորություններ 2020 թվականի աշնանը դպրոցները բացելու վերաբերյալ

Թարմացված օրինակ - հուլիսի 16, 2020

ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԲԱԺԻՆ HTTPS://WWW.BURBANKUSD.ORG/REOPENING

Կենտրոնանում է 4 մասերի վրա.

- Դասավանդում
- Սոցիալ հուզական կրթություն
- Գործող բաժին
- Ընտանիքի և համայնքի ներգրավվածություն

Ներկայացուցիչներ հետևյալ խմբերից.

- Աշակերտներ
- Ծնողներ
- Արտոնագրված աշխատակազմ (ուսուցիչներ, խորհրդատուներ և այլն)
- Աջակցող աշխատակազմ
- Այլ աշխտակիցներ (հավաքարարներ, սննդի աշխատակազմ, տեխնոլոգիա և այլն)
- Դպրոցի ղեկավարություն
- Դպրոցական շրջանի ղեկավարություն
- Կրթական բաժնի անդամներ

ԴՊՐՈՑՆԵՐԸ ԲԱՑԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

- **Աշակերտի անվտանգություն**
  - Ֆիզիկական առողջություն
  - Սոցիալ հուզական առողջություն
- **Աշխատակազմի անվտանգություն**
  - Ֆիզիկական առողջություն
  - Սոցիալ հուզական առողջություն
- **Դասավանդման որակ**
  - Առավել խոցելի աշակերտների կարիքների բավարարում
  - Դասավանդման ճկուն մոդելի մշակում
  - Շարունակական աջակցություն հատկացնել

ԲՈԼՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՄՆՎԱԾ ԵՆ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԵՎ ԳԱՎԱՌԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ՎՐԱ

ԲԴՄՇ-Ն ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԿՍԿՍՎԻ ՕԳՈՍՏՈՍԻ 17-ԻՆ 100% ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄՈԴԵԼՈՎ

Այս որոշումն ընդունվել է հաշվի առնելով ընթացիկ առողջապահական պայմաններն ու հանրային առողջապահության գրասենյակի հրամանները:

- **Ընթացիկ առողջական պայմաններ.**

  http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/data/index.htm

- **Ընթացիկ հանրային առողջության հրամաններ.**
- http://publichealth.lacounty.gov/media/Coronavirus/docs/protocols/Reopening_K12Schools.pdf

ԴԱՍԱՎԱՆԴՈՒՍ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- **1-ին փուլ.** 100% հեռակա ուսուցում – **Բոլոր աշակերտների համար կսկսվի օգոստոսի 17-ին այս մոդելով:**

- **2-րդ փուլ.** Հիբրիդ մոդել և 100% հեռակա ուսուցում – (այս տարբերակը հասանելի չէ ուսումնական տարվա սկզբին)

  Ընտանիքները կարող են ընտրել ցանկացած տարբերակ, երբ առողջապահական գրասենյակը թույլ տա աշակերտներին անձամբ վերադառնալ դպրոց:

Հեռակա ուսուցման մոդելի վերջնական մանրամասները բանակցվում են Բրբենքի ուսուցիչների ասոցիացիայի հետ (BTA):

1-ԻՆ ՓՈՒԼ.
100% ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄՈԴԵԼ – ԲՈԼՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Անվտանգություն	Դասավանդում	Տեխնոլոգիա
• Վարակի մինիմալ ազդեցություն – նյութերի և սննդի սահմանափակ բաժանում • Դիմակների, ախտահանիչի կամ սոցիալ/ֆիզիկական հեռավորության մինիմալ կարիք – սակավ քանակով աշխատակիցներ	• ԱՄ-6 դասարաններ. Անձամբ/ձայնագրված դասավանդում ուսուցիչների կողմից և փոքր խմբեր, հիմնված **ուսումնական ծրագրի** վրա • 7-12 դասարաններ. **Ուսումնական ծրագիր** և լրացուցիչ առցանց ուսումնական ծրագիր (APEX) • Տառային գնահատականներ, ըստ ԲԴՄՇ-ի օրենքների:	• Քրոմբուկներ այն աշակերտների համար, ովքեր դրա կարիքն ունեն • Համացանցային կապ բոլոր նրանց համար, ովքեր դրա կարիքն ունեն • Տեխնոլոգիական աջակցություն ԲԴՄՇ-ի կայքի կամ հեռախոսազանգի միջոցով

Հեռակա ուսուցման մոդելի վերջնական մանրամասները բանակցվում են Բրբենքի ուսուցիչների ասոցիացիայի հետ (BTA):

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ- SB 98

180 կրթական դոպե մանկապարտեզի համար

230 կրթական դոպե 1-3-րդ դասարանների համար

240 կրթական դոպե 2-4-րդ դասարանների համար

180 կրթական դոպե շարունակական/համայնքային ցերեկային միջնակարգ դպրոցի աշակերտների համար

- **Կրթական դոպեները հինված են և դպրոցում և տանը կատարված դասավանդման վրա։**

ՀԱՃԱԽՈՒՄ – SB 98

- Ամեն օր, պետք է նշվի յուրաքանչյուր աշակերտի մասնակցությունը, ներառնելով հեռակա ուսուցման օրերին:
- Պետք է նշվի նաև յուրաքանչյուր աշակերտի շաբաթական մասնակցությունը, լինի դա մասնակի կամ հեռակա ուսուցման ընթացքում:
- Այն աշակերտները, ովքեր չեն մասնակցի անձամբ դպրոց հաճախելով կամ հեռակա ուսուցման եղանակով կհամարվեն բացակա:

ԱՆՁԱՄԲ ՇՓՈՒՄ – SB 98

Աշակերտի կողմից պահանջվող կրթական դասավանդում, որը կատարվում է տեղական կրթական գործակալության արտոնագրված աշխատակցի ֆիզիկական հսկողության և վերահսկողության ներքո: Տեղական կրթական գործակալությունը պետք է առավելագույն հնարավորությունների սահմաններում ապահովի անձամբ դպրոց հաճախելու հնարավորություն:

Այն ներառնում է հետևյալը.

Ուղղակի ուսուցում, փոքր խմբեր, գրասենյակային ժամեր, աշակերտի կատարած աշխատանքի վերահսկողություն, հասանելի լինել օգնության և աջակցության համար:

100% ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ – ԲՈԼՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

- Աշակերտները կշարունակեն արձանագրված մնալ բնակության դպրոցում:
- Աշակերտներին շրջանի ուսուցիչ կնշանակվի և կաշխատեն կրթական գրասենյակի կողմից հաստատված *Go Math և Benchmark* (անգլերեն լեզու) ծրագրերով: Նաև, ուսուցիչներին հասանելի կլինեն լրացուցիչ ծրագրեր:
- Աշակերտները կշփվեն ուսուցիչների հետ ամեն օր:
- Տառային գնահատականներ, ըստ ԲԴՄՇ-ի օրենքների:
- Կհրամցվի երկլեզու ուսուցում:

Հեռակա ուսուցման մոդելի վերջնական մանրամասները բանակցվում են Բրբենքի ուսուցիչների ասոցիացիայի հետ (BTA):

100% ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ – ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԲՈԼՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

- Աշակերտները կշարունակեն արձանագրված մնալ բնակության դպրոցում:
- Բոլոր ծրագրերը կհրամցվեն հեռակա ուսուցման մոդելով:
- Սպորտաձևերը կշարունակվեն համացանցային մոդելով:
- Աշակերտները կաշխատեն շրջանի ուսուցիչների հետ և կրթական գրասենյակի կողմից հաստատված ծրագրով:
- Աշակերտներն ամեն օր կշփվեն ուսուցիչների հետ:
- Գնահատականները կբաշխվեն կրթական գրասենյակի կանոնակարգերի համաձայն:

Հեռակա ուսուցման մոդելի վերջնական մանրամասները բանակցվում են Բրբենքի ուսուցիչների ասոցիացիայի հետ (BTA):

100% ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ – ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ
ԱՆԿԱԽ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ (ILA)

- Աշակերտները կկարողանան ընտրել բոլոր դասընթացները 100% առցանց ուսուցմամբ:
- 7 – 12-րդ դասարանցիները կարող են արձանագրվել անկախ ուսուցման ակադեմիայում (ILA), որը արտոնավորված և ընդունված է Կալիֆոռնիայի համալսարանի կողմից:
- Աշակերտները կկարողանան վերջացնել դասընթացը 22 օրվա ընթացքում, բայց կարող են նաև արագացնել ուսուցումը, ըստ իրենց կարողությունների:
- Ուսումնական ծրագիրը APEX-ն է:
- APEX ծրագիրն ունի առաջադեմ (Honors and AP courses) դասընթացներ:
- Աշակերտները կարող են երկակի արձանագրվել և ամենաշատն ունենալ 2 ընտրովի դասընթաց իրենց բնակության դպրոցում:

Հեռակա ուսուցման մոդելի վերջնական մանրամասները բանակցվում են Բրբենքի ուսուցիչների ասոցիացիայի հետ (BTA):

100% ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ –ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ԱՆԿԱԽ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ (ILA) - ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

- Սա ծրագիր **չէ** այն մարզիկների համար, ովքեր ցանկանում են NCAA-ի միջոցով սպորտով զբաղվել քոլեջում:
- Աշակերտները պետք է ծրագրում մնան ամբողջ կիսամյակի ընթացքում:
- Աշակերտներն ամեն օր կշփվեն ուսուցիչների հետ և շաբաթական մեկ անգամ՝ գործակալի հետ:
- Ընտրովի դասընթացները սահմանափակ են:
- Եթե ձեզ հետաքրքրում է Անկախ կրթության ակադեմիան, ապա դիմել emiliourioste@burbankusd.org և johnparamo@burbankusd.org. Դպրոցական շրջանը հետաքրքրված աշակերտների ցուցակ է պատրաստում:
- **Հեռակա ուսուցման մոդելի վերջնական մանրամասները բանակցվում են Բրբենքի ուսուցիչների ասոցիացիայի հետ (BTA):**

ԵՐԿԱԿԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

- Հրամցվում է մանկապարեզից մինչև 7-րդ դասարանցիներին
- Դասավանդումը կկատարվի արտոնագրված ուսուցիչների կողմից
- Դասավանդումը հատկացվում է իսպաներեն 90/100 մոդելի միջոցով
- Անգլերեն լեզվի քերականությունը, մաթեմատիկան, հասարակագիտությունը և գիտությունը դասավանդվելու են իսպաներեն լեզվով
- Ֆիզկուլտուրան, երաժշտությունը և արվեստը կդասավանդվեն անգլերեն լեզվով

ՍՈՑԻԱԼ ՀՈՒԶԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Դպրոցում տեղի ունեցող խորհրդատվություն

- Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանը կշարունակի աշխատել Բրբենքի Ընտանեկան ծառայությունների գործակալության (FSA) (818) 845-7671 հետ՝ տարրականից մինչև միջանակարգ դպրոցի աշակերտներին ֆիզիկական հեռավորություն միջոցով (մենք խրախուսում ենք համացանցային հանդիպումներ) խորհրդատվության ծառայություններ հատկացնելու համար:

- Լրիվ հեռակա ուսուցման մոդելի ընթացքում, դպրոցում տեղի ունեցող խորհրդատվության ծառայությունները կշարունակվեն առանց ընդհատվելու, հեռախոսով և երբ հնարավոր լինի՝ գործակալությունում:

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանը ռեսուրսների պահեստ է տեղադրել շրջանի կայքում՝ «Կովիդ19 – թվային ռեսուրսների կենտրոն աշակերտների և ընտանիքների համար» (“Covid19 Student and Family Digital Resources Center”) վերնագրով https://www.burbankusd.org/COVID-19 : Ռեսուրսների էջը թարմացվում է Լոս Անջելեսի գավառի կրթական գրասենյակի առաջարկների հիման վրա՝ ներկայիս համաճարակի պատճառով: Դպրոցական շրջանն առաջարկություններ է տեղադրել նաև խորհրդատվական աշխատակազմի կողմից:

- Յուրաքանչյուր դպրոցի կայք, հղում կպարունակի շրջանի ռեսուրսների էջի համար: Այս մեթոդով ռեսուրսները միշտ հասանելի կլինեն:

ԳՈՐԾՈՂ ԲԱԺԻՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- Առօրյա աջակցություն համացանցային կարիքները բավարարելու համար.
  - Ծնողները/աշակերտները կարող են լրացնել համացանցային BUSD Student / Parent Tech Support փաստաթուղթը կամ զանգահարել օգնության գրասենյակին (818) 729-3401 հեռախոսահամարին:
  - Սարքավորման վերանորոգման համար ժամադրություն վերցնել (սահմանափակել անհատների ներկայությունը)
  - Հնարավորություն դեպքում, սարքավորումը կփոխարինվի ուրիշով (Քրոմբուկները/թեժկետերը)
  - Սարքավորումը կարելի է բերել շրջան երեքշաբթի օրերին և տեխնիկը կաշխատի դրա վրա չորեքշաբթի օրերին: Պատրաստ լինելու ժամանակ, ծնողը/աշակերտը կամ աշխատակիցը կիրազեկվեն և ժամադրության միջոցով կվերցնեն այն հինգշաբթի օրը: Եթե ավելի շատ աշխատանք է պետք կատարել, ապա հնարավորության դեպքում, այլ սարքավորում կտրվի՝ կրթական ժամի նվազագույն կորստի համար:

ԲՅՈՒՋԵ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐ

- Հետևել Կորոնավիրուսի համաճարակի հետ կապված եզակի ծախսերը
- Հետևել և եզակի եկամուտներ փնտրել՝ կապված Կորոնավիրուսի համաճարակի հետ
- Հետևել և ներկա/բացակա կատարել տարբեր մոդելների առկայություն դեպքում
- Վերանայել ֆինանսական ճգնաժամի և կառավարման աջակցության թիմի (FCMAT) ահազանգը՝ բյուջեի պլանավորման համար
- Ուժեշ քարոզչություն խթանել օրենսդրությունը՝ ADA-ի հիմունքների վրա հիմնվելու փոխարեն հիմնվել արձանագրության հիմունքների վրա
- Բյուջետավորել միջոցները, որոնք անհրաժեշտ են ֆիզիկական հեռավորությունը և անվտանգությունը պահպանելու համար
- Աջակցել դպրոցներին՝ նյութերի, սարքերի և շինությունների ձեռքբերման մեջ, որոնք կապահովեն առողջությունն ու անտվանգությունը

ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ընտանիքները պետք է դիմեն, որպեսզի համոզվեն, որ կորակավորվեն 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում անվճար կամ զեղչված գնող սնունդ ստանալու համար: Ամեն տարի պետք է լրացնել նոր դիմումնագիր: Հուլիսի 6-ից սկսած դիմումնագիրը հնարավոր կլինի լրացնել www.busdfoodservices.com կայքում:
- Ամեն օր սնունդ չի վաճառվի, իսկ բուֆետը փակ կլինի: Ամեն ուրբաթ օր, դպրոցից կկարողանաք 5 օրվա սնունդ վերցնել դասամիջոցի և ճաշի համար: Այդ սնունդը կարելի է բերել դպրոց և ուտել դասամիջոցի կամ ճաշի ընթացքում: Սննդի բաշխումը կկատարվի առավոտյան ժամը 8:30-ից մինչև կեսօրից հետո ժամը 12:30: Դեռ մշակում ենք, թե որտեղից հնարավոր կլինի սնունդ ստանալ: Սննդի բաժանման առաջին օրը կլինի ուրբաթ, օգոստոսի 14-ին՝ դպրոցները բացվելու նախորդ ուրբաթ օրը:
- Սպասարկում առանց շփման – Ընտաիքներին կտրվի հատուկ կոդ յուրաքանչյուր աշակերտի համար, որի միջոցով սնունդ կստանան:
- Սնունդը պետք է վերցնել երեխայի սովորած դպրոցից:

ՍՆՆԴԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ- (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

- Սննդի մատակարարման օրը երեխաներին հարկավոր չէ ներկա գտնվել:
- Ընտանիքները կարող են մեկ այլ անձի ուղարկել սնունդը վերցնելու համար, եթե իրենց չեն կարող վերցնել այդ ժամին: Յուրաքանչյուր ընտանիքի պարտականությունն է կոդը տալ սնունդը ստացող անձին:
- Որակավորված ընտանիքներին պետք չէ վճարել այս սննդի համար: Զեղչված գնով ուտելիք ստացող ընտանիքները պետք է .30 սենթ վճարեն դասամիջոցի ուտելիքի համար, և .40 սենթ՝ ճաշի համար: Չորակավորված ընտանիքները պետք է լրիվ գին վճարեն սննդի համար: Տարրական դպրոցի դասամիջոցի ուտելիքն արժե $2.25, իսկ ճաշը՝ $3.50: Միջանկյալ և միջնակարգ դպրոցում դասամիջոցի ուտելիքն արժե $2.50, իսկ ճաշը՝ $3.75:

ԸՆՏԱՆԻՔԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԲԴՄՇ-Ի ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԾՐԱԳՐԵՐ

- Զանգի շուրջ ծրագիր (Around the Bell (ATB))
  - Գործում է տարրական բոլոր դպրոցներում առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 6-ը:
  - Դիմել երեխաների զարգացման գրասենյակին 818-729-4424 հեռախոսահամարով:
- ASES ծրագիր
  - Ֆինանսավորվում է նահանգային հիմնադրամով
  - Այն անվճար է որակավորված ընտանիքների համար
  - Պրովիդենսիա, Վաշինգտոն, Լյութեր և Դիզնի
  - Դիմել Լիո Մարտինեսին LeoMartinez@Burbankusd.org հասցեով

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔ
– շարունակություն

- Համգործակցել համայնքի կազմակերպությունների հետ. ATB, Տղաների և աղջիկների ակումբ, Բրբենք քաղաքի (ASD), և YMCA-ի հետ երեխաների խնամքի ժամերը և տեղն ավելացնելու համար (որտեղ հնարավոր է):
- Նահանգային եկամտի չափանիշներին բավարարող ընտանիքներին օգնել ապահովել երեխաների խնամքով: Ընտանիքները պետք է որակավորվեն հիմնվելով եկամտի և կարիքի վրա: Ծառայությունները հատկացվում են Վաշինգտոն երեխաների կենտրոնում (նախակրթարանից – դպրոցական տարիքի) և Բրետ Հարթ երեխաների կենտրոնում (միայն դպրոցական տարիքի երեխաներ):
- Հավելյալ տեղեկությունների համար, հյուրընկալել ԲԴՄՇ-ի կայքի երեխաների խնամքի էջը https://www.burbankusd.org/childcare

ՀՈՐԱՍ ՄԵՆՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

- Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանի Հորաս Մենն երեխաների կենտրոնն այնպիսի ծրագրեր ունի, որոնք մշակված են տարբեր կարիք ունեցող երեխաներին ծառայելու համար: Որակյալ այս ծրագիրը ծառայում է մանուկներին, փոքրիկներին և նախակրթարանի տարիքի երեխաներին՝ ուշադրությունը դարձնելով նրանց ճանաչողական, սոցիալական, հուզական և ֆիզիկական զարգացման վրա: Խթանող միջավայրն երեխաներին խրախուսում է զարգացնել ինքնակարգապահություն և ինքնատիրապետում:
- Երեխաները սովորում են խաղի միջոցով: Նրանց թույլատրվում է ընտրություն կատարել և գործել: Աշխատակազմը հանդես է գալիս որպես ուղեցույց, և ընդլայնում իրենց ուսումը խրախոսման միջոցով և ձեռք բերում նոր հմտություններ և հասկացություններ: Երեխաներին տրվում են բազմաթիվ հնարավորություններ՝ գիտելիքն ու զարգացումը բարելավելու համար: Ծրագրերն ու միջոցառումները ճանաչում են ունակության, լեզվի և մշակութային անհատական տարբերությունները և տարիքին համապատասխան կրթական միջոցառումների միջոցով հասնում կրթական նվաճումների և հաջողության:
- Հավելյալ տեղեկությունների համար, խնդրում ենք զանգահարել Հորաս Մենն երեխաների կենտրոնը (818) 729-1650 հեռախոսահամարով, առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 6-ը:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

- **Հուլիսի 23**
  - Հատուկ ուսուցման բաժին
  - Երեխաների խնամք
- **Հուլիսի 30**
  - Տեխնոլոգիայի բաժին
- **Օգոստոսի 6**
  - Թարմացումներ առողջության վերաբերյալ
- **Օգոստոսի 13**
  - Սոցիալ հուզական աջակցություններ
  - Տնօրենների հաղորդագրություններ
  - Ծնողների ուսուցում աշակերտներին աջակցելու համար

*Որոշ թեմաներ և ամսաթվեր կփոփոխվեն ըստ հանրային առողջապահության և պայմանների:

ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

- **ԲԴՄՇ-ի կայքի հաճախակի տրվող հարցերը բաժանված են հետևյալ բաժինների.**
  - Ուսուցմնական ծրագիր և դասավանդում
  - Առողջություն և անվտանգություն
  - Հոգեկան առողջության և բարեկեցության աջակցություն
  - Սպորտ
  - Սննդի ծառայություններ
  - Տեխնոլոգիա
  - Երեխաների խնամք
  - Համայնքային/ընտանեկան ռեսուրսներ
- https://www.burbankusd.org/reopeningfaqs

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

- Վարակի ղեկավարման և կանխարգելման կենտրոն (Centers for Disease Control and Prevention)

  https://www.cdc.gov/coronavirus/2019-ncov/index.html
- Կալիֆոռնիայի Նահանգի նահանգապետի գրասենյակ https://covid19.ca.gov/
- Կալիֆոռնիայի հանրային առողջության բաժին (California Department of Public Health) https://www.cdph.ca.gov/
- Լոս Անջելեսի գավառի հանրային առողջապահության բաժին (County of Los Angeles Department of Public Health) http://publichealth.lacounty.gov/
- Լոս Անջելեսի գավառի կրթական գրասենյակ (Los Angeles County Office of Education) https://www.lacoe.edu/

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

- **Աշխատանքի անվտանգության և առողջության ադմինիստրացիա (Occupational Safety and Health Administration (OSHA))**
  https://www.osha.gov/

- Խնդրում ենք հյուրընկալել ԲԴՄՇ-ի կայքը տեղեկություն ստանալու համար. https://www.burbankusd.org/reopeningfaqs
  - Հարվարդի առողջապահական ծրագիր
  - Լոս Անջելեսի գավառի դպրոցների 2020-21ուս. տարվա ծրագիր
  - Ավելի ուժեղ միասին – Ուղեցույց Կալիֆոռնիայի պետական դպրոցները ապահով բացելու վերաբերյալ
  - Ամերիկայի դպրոցներն ու համայնքն անվտանգ բացելու ծրագիր (Ուսուցիչների ամերիկյան ֆեդերացիա)

ՀԱՋՈՐԴ ՔԱՅԼ

- Օգոստոսի 6, 2020, կրթական գրասենյակի հերթական ժողով – նորություններ դպրոցները բացելու վերաբերյալ
- Օգոստոսի 17, 2020 – ուսումնական տարվա 1-ին օր – 100% հեռակա ուսուցում
- <u>ՆՇՈՒՄ.</u> Կորոնավիրուսի փոփոխական լինելու պատճառով, մենք կսկսենք ուսումնական տարին 100% հեռակա ուսուցման մոդելով և կանցնենք հիբրիդ մոդելին, երբ հնարավոր լինի:
- Առաջարկություններն ուղարկել այս հասցեին. re-opening@burbankusd.org